ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՀՈՒԼԻՍ 2026



Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի Համաեվրոպական տարածաշրջանային խորհրդի (ITUC/PERC) ամառային դպրոցը Երևանում

Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) աշխատողների գործունեության բյուրոյի (ACTRAV) տնօրենի այցը Երևան

Աշխատողի ձայնը արհմիութենական պոդքաստի հյուրն է ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանը

«Բարի լույս» հաղորդման տաղավարում՝ «Արհմիութենական սպորտ 2026»-ի մասին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ողջույնի խոսք
- Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի Համաեվրոպական տարածաշրջանային խորհրդի (ITUC/PERC) ամառային դպրոցը Երևանում
- Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) աշխատողների գործունեության բյուրոյի (ACTRAV) տնօրենի այցը Երևան
- Սեմինար
  Աշխատանքային օրենսդրություն, արհմիութենական փաստաթղթաշրջանառություն
- «Բարի լույս» հաղորդման տաղավարում՝ «Արհմիութենական սպորտ 2026»-ի մասին
- «Արհմիութենական սպորտ 2026». մրցումներից՝ մինչև ապագայի մարտահրավերներ
- Հանդիպում Եվրախորհրդարանի պատգամավոր Մարինա Մեսուրի հետ
- Աշխատողի ձայնը արհմիութենական պողքաստի հյուրն է ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանը
- Տեղի ունեցավ Հանրապետական եռակողմ հանձնաժողովի նիստը

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

«Արհմիութենական անցուդարձ» ամսագիրն լուսաբանում և հանրահռչակում է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) կողմից կատարված աշխատանքները: Այս ամսագիրը դարձել է հարթակ, որտեղ ներկայացվում են արհմիութենական առօրյայի կարևոր իրադարձությունները, ծրագրերը և միջոցառումները, որոնք նպաստում են աշխատողների իրազեկմանն ու նրանց աշխատանքային, սոցիալական, տնտեսական և մասնագիտական իրավունքների պաշտպանությանը:
Այսօր, ավելի քան երբևէ, տեղեկացված լինելը կարևոր է, և մենք շարունակում ենք մեր գործն՝ ամրապնդելով արհմիութենական շարժումը Հայաստանում և տարածելով տեղեկատվություն:

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՀԱՄԱԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ (ITUC/PERC) ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Երևանում հունիսի 30-ից հուլիսի 1-ը անցկացվեց Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի Համաեվրոպական տարածաշրջանային խորհրդի (ITUC/PERC) ամառային դպրոցը, որը համախմբեց Արևելյան և Արևմտյան Եվրոպայի, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի արհմիութենական շարժման ներկայացուցիչներին:

Երկօրյա հանդիպումը հնարավորություն տվեց ոչ միայն անդրադառնալ աշխատանքի աշխարհի արագ փոփոխություններին, այլև միասին քննարկել դրանց դիմակայելու և աշխատողների իրավունքների պաշտպանությունն ամրապնդելու ուղիները: Քննարկումների առանցքում էին տեխնոլոգիական զարգացումների և արհեստական բանականության ազդեցությունը աշխատաշուկայի վրա, արժանապատիվ աշխատանքի ապագան, սոցիալական երկխոսության զարգացումը, ինչպես նաև խաղաղության, կայունության և սոցիալական արդարության փոխկապակցվածությունը:

Ամառային դպրոցի ընթացքում միջազգային կառույցների ղեկավարներն ու փորձագետները ներկայացրեցին տարածաշրջանային և գլոբալ միտումները՝ ընդգծելով, որ աշխատանքի փոփոխվող աշխարհում արհմիությունների դերը ոչ միայն աշխատողների իրավունքների պաշտպանության, այլև արդար և ներառական հասարակությունների ձևավորման գործում շարունակում է մնալ առանցքային: Հանդիպմանը մասնակցում էին նաև Աշխատանքի միջազգային կազմակերպության, Եվրոպական արհմիութենական ինստիտուտի, ՄԱԿ-ի և այլ միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Երևանյան ամառային դպրոցը ևս մեկ անգամ ցույց տվեց, որ աշխատողների իրավունքների պաշտպանությունը չի սահմանափակվում ազգային սահմաններով: Աշխատանքի աշխարհի գլոբալ փոփոխություններին անհրաժեշտ է պատասխանել համատեղ ջանքերով՝ ուժեղացնելով սոցիալական երկխոսությունը, արհմիությունների համագործակցությունը և աշխատողների ձայնը քաղաքական որոշումների կայացման գործընթացներում:

Միջոցառումը դարձավ տարածաշրջանային համագործակցության խորացման և արհմիութենական շարժման հետագա առաջնահերթությունների ձևավորման կարևոր հարթակ՝ ընդգծելով մեկ ընդհանուր ուղերձ՝ արդար աշխատանքի, սոցիալական արդարության և խաղաղության համար անհրաժեշտ է միասին գործել:

https://www.facebook.com/reel/2056707411936758
https://www.facebook.com/pagehamk/posts/pfbid021xeF6joBqdnBC2DNzGtMkjQhrpxKK61FXWknxDH6SEXZYwLCKznUej5D8ooqHM8nl
https://www.facebook.com/pagehamk/posts/pfbid0qiKbspXfegWqe1w8cmLyDNfk26Ppy1WxkREoScdu6M6DFq2z5PTGWCNEHy3ehu2Hl

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (ԱՄԿ) ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ (ACTRAV) ՏՆՕՐԵՆԻ ԱՅՑԸ ԵՐԵՎԱՆ

Հունիսի 30-ին և հուլիսի 1-ին Երևանում անցկացվեց Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի Համաեվրոպական տարածաշրջանային խորհրդի ամառային դպրոցը, որի շրջանակում Հայաստան էր ժամանել Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) աշխատողների գործունեության բյուրոյի (ACTRAV) տնօրեն Օլիվեր Ռոպկեն:

Այցի ընթացքում Օլիվեր Ռոպկեն Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանի և ԱՄԿ աշխատողների գործունեության հարցերով ավագ մասնագետ Գոչա Ալեքսանդրիայի մասնակցությամբ անցկացրեց մի շարք հանդիպումներ՝ նվիրված Հայաստանում սոցիալական երկխոսության զարգացմանը, աշխատողների իրավունքների պաշտպանությանը և աշխատանքի ոլորտի բարեփոխումներին:

Այցի ընթացքում Օլիվեր Ռոպկեն հանդիպեց նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին աշխատանքի ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության, սոցիալական երկխոսության զարգացման, գործադուլի իրավունքի պաշտպանության և աշխատանքային բարեփոխումների հարցերը:

Օլիվեր Ռոպկեն ողջունեց Հայաստանի կողմից ԱՄԿ թիվ 190 կոնվենցիայի վավերացումը՝ ընդգծելով դրա արդյունավետ կիրառման կարևորությունը ինչպես օրենսդրական, այնպես էլ գործնական մակարդակներում:

Էլեն Մանասերյանն իր հերթին կարևորեց Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ համագործակցության նշանակությունը՝ ընդգծելով, որ աշխատանքի և աշխատողների իրավունքների պաշտպանության ոլորտում բազմաթիվ խնդիրներ շարունակում են մնալ արդիական: Նրա խոսքով ՄԻՊ-ի հետ շարունակական համագործակցությունը կարևոր և անհրաժեշտ է՝ առկա խնդիրների լուծման, աշխատողների իրավունքների պաշտպանության և արդյունավետ մեխանիզմների ձևավորման համար:

Երևանում կայացած հանդիպումները վերահաստատեցին ԱՄԿ-ի և գործընկերների հանձնառությունը՝ շարունակելու աջակցությունը Հայաստանում սոցիալական երկխոսության զարգացմանը, աշխատողների իրավունքների պաշտպանությանը և արժանապատիվ աշխատանքի խթանմանը:

ՍԵՄԻՆԱՐ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ, ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

«ԲԱՐԻ ԼՈՒՅՍ» ՀԱՂՈՐԴՄԱՆ ՏԱՂԱՎԱՐՈՒՄ՝ «ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՍՊՈՐՏ 2026»-Ի ՄԱՍԻՆ

«Բարի լույս» հաղորդման տաղավարում Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի ուսումնահետազոտական կենտրոնի ղեկավար Վարդուհի Բրուտյանը և արհմիութենական Լուսինե Ղահրամանյանը ներկայացրել են «Արհմիութենական սպորտ 2026» նախաձեռնությունը։

Հյուրերը խոսել են արհմիությունների գործունեության կարևոր բաղադրիչների մասին՝ ընդգծելով, որ արհմիությունը միայն աշխատողների իրավունքների պաշտպանության կառույց չէ։ Այն նաև համախմբման, առողջ ապրելակերպի, կրթության, փոխադարձ աջակցության և համագործակցության մշակույթ ձևավորող միջավայր է։

«Արհմիութենական սպորտ 2026»-ը միավորում է սպորտային ակտիվությունը, մասնագիտական քննարկումներն ու թիմային աշխատանքը՝ ստեղծելով տարբեր ոլորտների արհմիությունների ներկայացուցիչների միջև շփման, փորձի փոխանակման և գործընկերային կապերի ամրապնդման հնարավորություն։

Հաղորդման ընթացքում անդրադարձ է կատարվել նաև սպորտի՝ որպես արհմիութենական համերաշխությունն ու թիմային ոգին ամրապնդող միջոցի կարևորությանը։ Նախաձեռնությունը նպատակ ունի ձևավորել ավելի ակտիվ, առողջ և համախմբված արհմիութենական համայնք։

«Արհմիութենական սպորտ 2026»-ը ևս մեկ քայլ է՝ ցույց տալու, որ արհմիութենական շարժումը ոչ միայն իրավունքների պաշտպանության, այլև մարդկանց միավորելու, զարգացնելու և համագործակցության նոր մշակույթ ձևավորելու մասին է։

https://www.facebook.com/reel/2459737194539233

«ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՍՊՈՐՏ 2026». ՄՐՑՈՒՄՆԵՐԻՑ՝ ՄԻՆՉԵՎ ԱՊԱԳԱՅԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

https://www.facebook.com/reel/1753886639074671

https://www.youtube.com/watch?v=KIW6Gb9GohQ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՄԱՐԻՆԱ ՄԵՍՈՒՐԻ ՀԵՏ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը, Լեռնագործների, մետալուրգների և ոսկերիչների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Էդուարդ Փահլևանյանը, Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիության նախագահ Անահիտ Ասատրյանը, Շինարարության և շինանյութերի արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Լյուդվիգ Սարգսյանը հանդիպել են Եվրախորհրդարանի պատգամավոր Մարինա Մեսուրի հետ։

ԱՇԽԱՏՈՂԻ ՁԱՅՆԸ ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՊՈԴՔԱՍՏԻ ՀՅՈՒՐՆ Է ՀԱՄԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ ԷԼԵՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆԸ

https://www.youtube.com/watch?v=XRpRUeH7TTs

https://hamk.am/am-ashkhatokhi-dzayny-arhmiutenakan-podqasti-hyurn-e-hamk-i-nakhagah-elen-manaseryany

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ

Տեղի ունեցավ Հանրապետական եռակողմ հանձնաժողովի նիստը

2026 թվականի հուլիսի 21-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Լուսինե Քոչարյանի նախագահությամբ տեղի ունեցավ Հանրապետական եռակողմ հանձնաժողովի նի...

https://hamk.am/tekhi-unetsav-hanrapetakan-erakokhm-handznazhokhovi-nisty

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա

Հասցե՝ Վազգեն Սարգսյան 26/3, Երևան, ՀՀ

Հեռ.՝ +37410 583682

www.hamk.am

hamk@hamk.am